

## ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ (ՀՀ ՎՊԽ) ՆԻՍՏԵՐ

### *05.03.2007թ. նիստին*

#### *Մասնակցում էին՝*

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ. Գևորգյանը, Գ.Անանյանը, Վ. Դավթյանը, Վ.Դանիելյանը, Յու. Պողոսյանը, Ա.Աղազարյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Հ.Գրիգորյանը:

#### *Հրավիրված էին՝*

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ. Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ. Սարոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ. Մարտիրոսովան, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ֆինանսների վիճակագրության բաժնի պետ Հ. Տիտիզյանը:

#### *Նիստում լավեցին հետևյալ հարցերը.*

1. «ՀՀ ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի կողմից իրականացված 2005թ. տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանագերծված տվյալների բազան ՀՀ առողջապահության նախարարությանը տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

*/Չեկուցող՝ Դ. Մարտիրոսովա/*

#### *Որոշեցին՝*

Թույլատրել ՀՀ առողջապահության նախարարությանը տրամադրել «ՀՀ ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի կողմից իրականացված 2005թ. տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանագերծված տվյալների բազան զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմանով:

*/Անհատական/*

2. «Առողջապահական ոլորտի արդյունավետության գնահատում» հետազոտության հարցաթերթը հաստատելու մասին հարցը:

*/Չեկուցող՝ Դ. Մարտիրոսովա/*

**Որոշեցին՝**

Հաստատել «Առողջապահական ոլորտի արդյունավետության գնահատում» հետազոտության հարցաթերթը:

*/Անհատական/*

3. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2005 թվականի նոյեմբերի 18-ի «Օբյեկտների գործարկման և շինարարական աշխատանքների կատարման մասին» ձև թիվ 1-ԿՇ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման մեթոդական ցուցումները հաստատելու մասին» թիվ 27-Ն, որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» հարցը:

*/Չեկուցող՝ Գ. Անանյան/*

**Որոշեցին՝**

«Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2005 թվականի նոյեմբերի 18-ի «Օբյեկտների գործարկման և շինարարական աշխատանքների կատարման մասին» ձև թիվ 1-ԿՇ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման մեթոդական ցուցումները հաստատելու մասին» թիվ 27-Ն որոշման հավելված 1-ով հաստատված հաշվետվության ձևի 2-րդ, 3-րդ, 4-րդ աղյուսակներում «/փաստացի գներով՝ հազար դրամ/» բառերը փոխարինել «/փաստացի գներով՝ հազար դրամ՝ առանց ԱԱՀ/» բառերով:

*/Նորմատիվ/*

4. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի օգոստոսի 9-ի «Օբյեկտների հիմնական միջոցների գործարկման և կապիտալ ներդրումների իրականացման մասին» ձև թիվ-2ԿՇ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման մեթոդական ցուցումները հաստատելու մասին» թիվ 132-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» հարցը:

*/Չեկուցող՝ Գ. Անանյան/*

**Որոշեցին՝**

Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի օգոստոսի 9-ի «Օբյեկտների հիմնական միջոցների գործարկման և կապիտալ ներդրումների իրականացման մասին» ձև թիվ -2ԿՇ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման մեթոդական ցուցումները հաստատելու մասին» թիվ 132-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Որոշման վերնագրում և ամբողջ տեքստում՝ «կապիտալ ներդրումներ» բառերը փոխարինել «շինարարություն» բառով՝ համապատասխան հոլովածներով:

2. Որոշման հավելված 1-ով հաստատված մեթոդական ցուցումների.

1) Որոշման ամբողջ տեքստում՝ «նախագծա-հետախուզական» բառը փոխարինել «ճարտարապետական, շինարարական նախագծման և կառուծքավորման (կոնստրուկտորավորման)» բառերով,

2) 17-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) և անուղղակի հարկերի գումարները շինարարության և հիմնական միջոցների գործարկման ծախսերի կազմում չեն ներառվում»:

3. Որոշման հավելված 1-ով հաստատված հաշվետվության ձևի.

1) 1-ին, 3-րդ, 4-րդ աղյուսակներում, ինչպես նաև «Տեղեկանք 1-ին բաժնի վերաբերյալ» աղյուսակում «/փաստացի գներով՝ հազար դրամ/» բառերը փոխարինել «/փաստացի գներով՝ հազար դրամ՝ առանց ԱԱՀ/» բառերով,

2) «Տեղեկանք 1-ին բաժնի վերաբերյալ» աղյուսակի 7, 8, 9 և 10 սյունակները հանել,

3) 3-րդ աղյուսակի «արտադրական ոլորտի» և «ոչ արտադրական ոլորտի» բառերը փոխարինել համապատասխանաբար՝ «արտադրական նշանակության» և «ոչ արտադրական նշանակության» բառերով,

4) 4-րդ աղյուսակի 401 տողի ե) ենթակետը ուժը կորցրած ճանաչել:

*/Նորմատիվ/*

5. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2004 թվականի դեկտեմբերի 29-ի «Հաշվետվություն օբյեկտների, հիմնական միջոցների գործարկման և կապիտալ ներդրումների իրականացման մասին» ձև թիվ 2-ԿՇ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման մեթոդական ցուցումները հաստատելու մասին» թիվ 37-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» հարցը:

*/Ձեկուցող՝ Գ. Անանյան/*

#### **Որոշեցին՝**

Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2004 թվականի դեկտեմբերի 29-ի «Հաշվետվություն օբյեկտների հիմնական միջոցների գործարկման և կապիտալ ներդրումների իրականացման մասին» ձև թիվ 2-ԿՇ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման մեթոդական ցուցումները հաստատելու մասին» թիվ 37-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Որոշման հավելվածով հաստատված մեթոդական ցուցումների 15-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) և այլ անուղղակի

հարկերի գումարները շինարարության և հիմնական միջոցների գործարկման ծախսերի կազմում չեն ներառվում»:

2. Որոշման հավելվածով հաստատված հաշվետվության ձևի 1-ին, 2-րդ աղյուսակներում «/փաստացի գներով՝ հազար դրամ/» բառերը փոխարինել «/փաստացի գներով՝ հազար դրամ՝ առանց ԱԱՀ/» բառերով:

*/Նորմատիվ/*

**6. Հաղորդում արտասահմանյան գործուղման հաշվետվության մասին՝ «Մեծ Բրիտանիա 06.02-09.02.2007թ. Ազգային հաշիվների կատարելագործումը. Ֆինանսական հաշվի մշակումը և ներդրումը թեմայով ուսումնական այցելության»:**

*/Զեկուցող՝ Վ.Դանիելյան, Ա. Սաֆյան, Հ. Տիտիզյան, Հ. Մատինյան/*

**Որոշեցին՝**

«Մեծ Բրիտանիա 06.02-09.02.2007թ. Ազգային հաշիվների կատարելագործումը. Ֆինանսական հաշվի մշակումը և ներդրումը» թեմայով ուսումնական այցելության մասին հաղորդումն ընդունել ի գիտություն:

*/Արձանագրային/*

**23.03. 2007թ. նիստին**

**Մասնակցում էին՝**

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ.Անանյանը, Վ. Դավթյանը, Վ.Դանիելյանը, Յու. Պողոսյանը, Ա.Աղազարյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Հ. Գրիգորյանը:

**Հրավիրված էին՝**

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ.Սիրգոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա. Հայրապետյանը, ՀՀ ԱՎԾ նախագահի գլխավոր խորհրդական Ջ. Սիրգոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ. Սարոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ Գ. Գյուրջյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի առևտրի և այլ ծառայությունների բաժնի գլխավոր մասնագետ Ա. Հարությունյանը:

**Նիստում լավեցին հետևյալ հարցերը.**

**1. «ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2005թ. նոյեմբերի 7-ի թիվ 21-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» հարցը:**

*/Զեկուցող՝ Ա. Հարությունյան/*

**Որոշեցին՝**

Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2005 թվականի նոյեմբերի 7-ի «Առևտրի շրջանառության ծավալի մասին» ձև թիվ 1-Առևտուր (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 21- Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1. Որոշման վերնագրից, 1-ին կետից, որոշման 1-ին կետով հաստատված հրահանգի (այսուհետ՝ հրահանգ) վերնագրից և հրահանգի 1.1 կետից, «Առևտրի շրջանառության ծավալի մասին» ձև թիվ 1-Առևտուր (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևից հանել «ծավալ» բառը՝ համապատասխան հոլովածներով:

2. Հրահանգի 2-րդ՝ «Հիմնական հասկացություններ» բաժնի 2.3 կետում «երբ գնորդն ապրանքներ է ձեռք բերում դրանց հետագա վերավաճառքի կամ մասնագիտական (վերամշակում և հետագա վաճառք) օգտագործման նպատակով» բառերը փոխարինել «երբ գնորդը մեծ խմբաքանակով ապրանքներ է ձեռք բերում դրանց հետագա վերավաճառքի համար այլ վաճառողներին, վերամշակողներին, բայց ոչ վերջնական սպառողներին՝ համապատասխան հաշվարկային փաստաթղթերով» բառերով:

3. Հրահանգի 3-րդ՝ «Լրացման կարգը» բաժնի.

ա) 3.1 կետում «(ընդունված ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի 24.07.2001թ. 58 որոշմամբ և հրապարակված ՀՀ Գերատեսչական նորմատիվ ակտերի 14.11.2001 թ. թիվ 19 տեղեկագրում)» բառերը փոխարինել «(հաստատված Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 2006 թվականի նոյեմբերի 22-ի թիվ 231-Ն հրամանով և հրապարակված Հայաստանի Հանրապետության Գերատեսչական նորմատիվ ակտերի 2006 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 30<sup>1</sup> տեղեկագրում)» բառերով:

բ) 3.2, 3.3 և 3.5 կետերում նշված «վաճառքի ծավալները» բառերը փոխարինել «վաճառքը» բառով:

գ) 3.6 կետը լրացնել նոր պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «Ցուցանիշը ներառում է միայն Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացված մեծածախ առևտուրը»:

*/Նորմատիվ/*

2. «Հայաստանի Հանրապետության 2004-2006 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագրի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Գ. Գյուրջյան/*

**Որոշեցին՝**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության 2004-2006 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագրի կատարման հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության 2004-2006 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագրի կատարման հաշվետվությունը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով:

*/Անհատական/*

3. Հաղորդում արտասահմանյան գործուղման հաշվետվության մասին՝ «ՄԱԿ վիճակագրական հանձնաժողովը և գլոբալ վիճակագրական համակարգը. “ճանապարհ դեպի առաջ” խորագրով բարձր մակարդակի ֆորում և ՄԱԿ վիճակագրական հանձնաժողովի 38-րդ հորելյանական նստաշրջան»:

*/Զեկուցող՝ Ս. Մնացականյան, Ա. Սաֆյան/*

**Որոշեցին՝**

«ՄԱԿ վիճակագրական հանձնաժողովը և գլոբալ վիճակագրական համակարգը. “ճանապարհ դեպի առաջ” խորագրով բարձր մակարդակի ֆորում և ՄԱԿ վիճակագրական հանձնաժողովի 38-րդ հորելյանական նստաշրջանը» հաշվետվության մասին հաղորդումը ընդունելի գիտություն:

*/Անհատական/*

**25.04.2007թ. նիստին**

**Մասնակցում էին՝**

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ. Գևորգյանը, Գ.Անանյանը, Վ. Դավթյանը, Վ.Դանիելյանը, Յու. Պողոսյանը, Ա. Աղազարյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Հ. Գրիգորյանը:

**Հրավիրված էին՝**

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ.Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա. Հայրապետյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ. Մարտիրոսովան, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային

տնտեսությունների հետազոտությունների բաժնի գլխավոր մասնագետ Ա. Գյուլբենկյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման բաժնի պետ Լ. Հարությունյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի առաջատար մասնագետ Հ. Եղիազարյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի Արարատի մարզային գործակալության պետ Լ.Դավթյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի Արագածոտնի մարզային գործակալության պետ Լ. Մովսիսյանը:

***Նիստում լավեցին հետևյալ հարցերը.***

1. «ԱՄՀ Տվյալների տարածման հատուկ ստանդարտի ձևաչափով ՀՀ ԱՎԾ կողմից վարվող մի խումբ տվյալների մեթոդական նկարագրությունների (մեթատվյալների) բազային և հրապարակման ձևաչափի էջերի առաջարկվող փոփոխություններին հավանություն տալու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Վ. Դանիելյան/*

***Որոշեցին՝***

Հավանություն տալ «ԱՄՀ Տվյալների տարածման հատուկ ստանդարտի ձևաչափով ՀՀ ԱՎԾ կողմից վարվող մի խումբ տվյալների մեթոդական նկարագրությունների (մեթատվյալների) բազային և հրապարակման ձևաչափի էջերի առաջարկվող փոփոխություններին:

*/Անհատական/*

2. «Հաղորդում 12-16.03.2007 թ. Շվեդիայի Ստոկհոլմ քաղաքում կայացած “Ժամանակի օգտագործում” թեմայով ուսումնական գործուղման հաշվետվության» մասին:

*/Զեկուցող՝ Գ. Գևորգյան, Գ. Մարտիրոսովա, Ա. Գյուլբենկյան, Լ. Հարությունյան և Հ. Եղիազարյան/*

***Որոշեցին՝***

Ընդունել ի գիտություն

2007թ. մարտի 12-16-ը Շվեդիայի Ստոկհոլմ քաղաքում կայացած “Ժամանակի օգտագործում” թեմայով ուսումնական գործուղման մասին հաղորդումը:

*/Անհատական/*

3. Հաղորդում 2007թ. մարտի 20-22-ը Դանիայի Կոպենհագեն քաղաքում կայացած “Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության (ԱՀԿ) Եվրոպական Տարածաշրջանի առողջապահության տեղեկատվական համակարգի զարգացման հարցերի վերաբերյալ” աշխատանքային հանդիպման մասին:

*/Զեկուցող՝ Գ. Գևորգյան/*

**Որոշեցին՝**

Ընդունել ի գիտություն

2007թ. մարտի 20-22-ը Գանիայի Կոպենհագեն քաղաքում կայացած “Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության (ԱՀԿ) Եվրոպական Տարածաշրջանի առողջապահության տեղեկատվական համակարգի զարգացման հարցերի վերաբերյալ” աշխատանքային հանդիպման մասին հաղորդումը:

*/Անհատական/*

4. Հաղորդում 2007թ. մարտի 13-15-ը Էստոնիայի Տալին, Վիլյանդի քաղաքներում կայացած “Ռեգիոնալ վիճակագրական համակարգի ներդրումը և զարգացումը” թեմայով ուսումնական այցելության մասին:

*/Զեկուցող՝ Ա. Աղազարյան, Լ. Սիրգոյան, Ա. Հայրապետյան, Լ.Դավթյան, Լ. Մովսիսյան/*

**Որոշեցին՝**

Ընդունել ի գիտություն

2007թ. մարտի 13-15-ը Էստոնիայի Տալին, Վիլյանդի քաղաքներում կայացած “Ռեգիոնալ վիճակագրական համակարգի ներդրումը և զարգացումը” թեմայով ուսումնական այցելության մասին հաղորդումը:

*/Անհատական/*